№ 223 Նոյեմբերի 28 (Դեկտեմբերի 9) 1881 Նոյեմբերի 28 (Դեկտեմբերի 9) № 223

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում դիմում են մեծարգոյ խմբագրատան մէջ։

Ստորագրագրացիր գիտում են ազգային Տիֆլիս. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի եւ տօն օրերից)

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ „ՄՇԱԿ"

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐԸ

ԵԿՈՂ **1882** ԹԻՒՆ

(ՏԱՍՆ ԵՒ ՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Կը հրատարակվի նոյն դիրքով և նոյն պրոգրամմայով,

ՊՐՈԳՐԱՄ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II. Առաջնորդող յօդուածներ, III. Ներքին տեսութիւն, IV. Արտաքին տեսութիւն, V. Խառն լուրեր, VI. Հեռագիրներ, VII. Ֆելիետոն կամ Բանասիրական, VIII. Ցայտարարութիւններ։

ԼՐԱԳՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ, 10 ռուբլ է, կէս տարվան 6 ռ., իւրաքանչիւր ամսին 1 ռուբլ։ Հասցով համարները 5 կոպէկ։

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետեւեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երուսալէմի վանքը։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Բագուից։ Նամակ Կիպրից։ Նամակ Շամախուց։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ամերիկա։ Գերմանիա։ Մի լուր Կ. Պոլսից։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ԵԱՅՑԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Կալուածական հարցը։

ԵՐՈՒՍԱԼԷՄԻ ՎԱՆՔԸ

Հայոց հասարակութիւնը զարմացմամբ իմացաւ, որ Երուսալէմի հայոց վանքը ունի 300,000 ռուբլ պարաք։ Ի՞նչիցն է գոյացել այդ ահագին պարաքը, կը հարցնի անպատճառ հայերից իւրաքանչիւրը։

Դորան պատասխանել շատ դժուար է։ Միայն կը բերենք այսչափ մի իրողութիւն հայոց այդ վանքի ամենամօտ պատմութիւնից, մի իրողութիւն, որ հաստատում են հայոց նոր պատմագիրները։

Ցիսուն տարի սրանից առաջ Երուսալէմի վանքը նոյնպէս ահագին պարաքեր ունէր։ Այդ ժամանակ Կ. Պոլսի պատրիարքը Պողոսն էր։ Վանքը դիմեց նրան, խնդրելով որ նա օգնի վանքին իր պարտքից դուրս գալու, թոյլ տայ հայոց ազգից փողկր ժողովելու, այդ պարտքը վճարելու համար։ Պողոս պատրիարքը փոխանակ անմիջապէս կօնդակ տալու վանքի միաբաններին ազգից փողկր ժողովելու համար, ինքն անձամբ ուղևորվեց Երուսալէմ, իրողութիւնը տեղի վրա վերատեսելու համար։ Հասնելով Երուսալէմ, պատրիարքը մի օր, երբ ամբողջ միաբանութիւնը ճաշի վրա էր, սեղանատան մէջ, ինքել տուեց միաբանների բոլոր խուցերը և յետոյ հետատեսելով արեղաների անձնական արկղերը, դուռ այդ արկղերի մէջ այնքան դրամ, որ կարողացաւ անմիջապէս վճարել վանքի ամբողջ ա գ գ այ ին պարքը։

Պատմական իրողութիւնը պէտք չունի կօմենտարիաներ։ Մենք մեր կողմից ոչինչ դատողութիւն չենք տալիս։ Թող պատմութիւնը ինքն խօսի իր համար։ Պատմութեան իրողութեան առաջ ոչ ոք իրաւունք չունի աչքերը փակել, ոչ ոք իրաւունք չունի պատմական փաստերի ճարտարախօսութեանը խուլ մնալ։ Իրողութիւնն այն է որ վանքի ընդհանուր պարտքերը գոյացան նոյն իսկ այն ժամանակ, երբ միաբանների անձնական կարողութիւնը յայտնվեցաւ։

Ցիսուն տարի սրանից առաջ Կ. Պոլսի Պողոս պատրիարքի այդ տեսակ հնարքով վանքի ամբողջ պարաքերը վճարվեցան։ Իսկ այն ժամանակից կրկին գոյացան Երուսալէմի վանքի մէջ ահագին պարաքերը։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒՒՑ

Նոյեմբերի 20

Բագու-Թիֆլիսեան երկաթուղու կառուցումն մեծ ազդեցութիւն ունեցաւ գէթն մօտակայ թուրք գիւղացիների վրա, որոնցից շատերը մինչև վերջին ժամանակները աւազակութեամբ էին պարապում։ Այս տարի դրանք ոչ թէ միայն կարողացան ծանօթանալ և յարաբերութիւններ ունենալ մեր աշխատող բանւորը, և նոյնպէս մեր մշոկն դասակարգի հետ, այլ և կարծես կատարելապէս հասկացան ատտեսական կեանքի նշանակութիւնը, որով հարկաւոր համարեցին թողնել իրանց նախկին կեանքի եղանակը և հետեւել այդտեղի, մանաւանդ օտարական հայ բանւորների աշխատասիրութեան օրինակին, տեսնելով որ դրանցից իւրաքանչիւրը գալիս են հեռու գաւառներից բանելու համար, լինելով միակ նեցուկ իրանց ընտանիքի, հրաժարվելով նիւթական միջոցներ վատնելու համար, հայրենիքից և ընտանիքի քաջալերանքից։ Կօպտան և կիսավայրենի թուրքերը սկսեցին մտնել աշխատանքի ունեցող են գիւղացիք և այլն։ Ի հարկէ վտանգի առաջը առնելու համար, հարկաւոր է մի կողմից ուսումնասիրել հարցը և միւս կողմից գցել նրան գործնական չրջան և քննել պատճառները, որոնք արդեւք են լինում այդ գործի ընթացքին։

Պատճառներից մէկը, որ չէ թոյլ տալիս գիւղացուն ձեռք բերել հարկաւոր քանակութեամբ հող, մեր կարծիքով այն է, որ հողը ծախվում է մեծ քանակութեամբ որի առնելը վեր է մի գիւղացու այժից, իսկ գիւղացիներից կամ բոլորովին և կամ սասիկ դժուարութեամբ է կազմվում ընկերութիւն, որը խմբովին, միացած այժով առնէ մեծաքանակ հող։

Հողը դժբաղդաբար չէ ծախվում բաժանած մանր մասերի, որովհետև կալուածատէրը կամ չէ ցանկանում գլուխս ցաւացնել և կամ ունենալով մեծ պարք, չէ կարողանում բաժանել հողերը մաս մաս և սպասել մինչև որ գիւղացիները կառնեն այդ բոլոր մասերը։ Կալուածատէրը առաւել յարմար է գտնում վաճառել իրան հողը փողատէրի վրա, թէպէտ պակաս գնով, բայց ստանալով արժէքը միանուագ։

Մեր երկրում բնակվող գերմանացիք իրանց մէջ ունեն կազմած հող առնելու ընկերութիւններ և հէնց այդ է պատճառը, որ նրանք հողի պակասութիւն չեն կրում։ Ցայտի ռուս գրողներից մէկը, Վ. Բորբոնով, մը և նոյն երեւոյթը նկատել է և ռուսական գերմանացիների մէջ։ Մեր գիւղացին չէ կարողանում ընկերութիւն կազմել, որովհետև ընկերութիւն կազմելու գաղափարը և կանոնները չը գիտէ և բացի դրանից արգելքը սաստկանում է մեր հողերի պատկանելութեան, քանակութեան և սահմանների անորոշ լինելու պատճառով, նա մանաւանդ, որ մենք մանր հողերի կրէդիտի համար հիմնարկութիւններ չունենք։ Այս հանգամանքների և երեւոյթների վրա մենք պէտք է առանձին ուշադրութիւն դարձնենք այն պատճառով, որ տարոց տարի Կովկասում դատարկ հողերը պակասում են, հողի գինը բարձրանում է, հողերը ընկնում են փողատէրերի և գումարատէրերի ձեռքը, և այդպիսով դժուարանում է գիւղացու համար հող ձեռք բերելը։ Այժմս մեր գիւղերը դեռ ևս հող ձեռք բերելու կարողութիւն ունեն, որովհետև հողերը այնքան թանգ չեն, և մեր գիւղացին լինելով աշխատասէր, հեշտութեամբ կարող է հողեր ձեռք բերել, դնելով իրան աշխատած կապիտալները հողի մէջ և բարօրեալ դրանով իրան և իր որդոց դրութիւն ու ապագան, իսկ 10—20 տարուց յետոյ կարելի է հանգամանքները փոխվեն, և մեր գիւղացին ընկնի այն դրութեան մէջ, ինչ դրութեան մէջ են Ռուսաստանի գիւղացիք, և այն ժամանակ նա ստիպված կը լինի գաղթելուսմ որոնել իր փրկութիւնը։ Այդպիսով մեր անհոգութիւնից կարող են առաջանալ մեծամեծ վտանգներ, որոնց առաջը մենք կարող ենք առնել ներկայումս իսկ ոչ ապագայում։ Կրա համար, մենք կարծում ենք հարկաւոր է կազմել մեծ առևտրական ընկերութիւն, որը առնի յարմար ժամանակում հողը, բաժանէ մանր մասերի և ծախէ մեր գիւղացիների վրա։ Այդպիսով գիւղացիները դնելով իրանց աշխատած կապիտալները հողի մէջ, փոքր առ փոքր կը լրացնեն հողի պակասութիւնը և կը բարօրեն իրանց դրութիւնը։

Բացի գրանից հարկաւոր է տարածել գիւղացիների մէջ ընկերութեան գաղափարը, որ նրանք այդ միջոցով կարողանան ձեռք բերել հողեր և բացի այդ ամենը, հարկաւոր է կազմել մանր հողային կրէդիտի հիմնարկութիւններ, որոնք տան նրանց միջոց գտել թէ ամենն մի հող, թէ իրանց հողաբաժինները, որովհետև տէրութիւնը, ինչպէս ուրիշ տեղեր, չէ փոխ տալու։ Բագուի, Գանձակի և Երեւանի Նահանգի գիւղացիներին փող, որ նրանք գնեն իրանց հողաբաժինները կալուածատէրերից, իսկ այդ գործը չուտով օրվայ հարց պէտք է դառնայ։

Ս. Բասատրեանց

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԱԼՈՒԱԾԱԿԱՆ ՀԱՐՑ

Ցայտնի է, որ Կովկասում գիւղատնտեսական նպատակի համար՝ վարելու և ուրիշ արդիւնաբերութեան յարմար հողեր շատ կան, բայց մի և նոյն ժամանակ յայտնի է, որ մեր գիւղացին չարչարվում է հողի պակասութեանից։

Հողաբաժինների պակասութեան լուրերը կարելի է կարդալ ամեն մի լրագրում, իսկ դրա հետեւանքը լինում է այն, որ գիւղացին ստիպված է ամենամեծ զոհաբերութիւններ անել հողեր վարելու իրաւունքը ձեռք բերելու համար։ և այդ պակասութիւնը նկատվում է ոչ թէ միայն մի տեղ, այլ ամբողջ Գանձակի, Երևանի, Թիֆլիսի և Բագուի նահանգներում, և ոչ թէ միայն կալուածատիրոջ գիւղացուց մէջ, այլ և արքունական գիւղացուց մէջ։

Մինչև վերջի ժամանակները արքունական դատարկ հողեր շատ կային և առանձին ուշադրութիւն չէր դարձնվում, թէ ինչքան են գիւղացիք հողեր վարում, բայց նորերումս, մի կողմից զանազան ազգեր կովկաս տեղափոխվելով, բանում են տադարկ հողերը և միւս կողմից արքունական կալուածների կառավարիչները խստութեամբ վարելով իրանց պաշտօնները, չեն թոյլ տալիս գիւղացիներին վարել աւելի քան հանում է նորանց։

Իսկ տէրութիւնը գիւղացուն հողը տալիս է ծախ հաշուով,—30 դեսեատին տասիա տեղից կամ 15 դեսեատին ճրովի տեղից, չը զանազանելով ծուխը՝ ընտանիքից։ Բայց մեր գիւղացին ապրելով պապական աւանդութեամբ, չէ սիրում բաժանել իր ընտանիքը, ինչպէս նկատել են երեւելի եւրօպացի ճանապարհորդները, և շատ անգամ կարելի է նկատել մի հայ գերդաստան լուսկացած 30—40 հոգուց, և ի հարկէ այդպիսի գերդաստանի համար 30 կամ 15 դեսեատին տեղ շատ քիչ է։ Այդպիսի գերդաստանն էլ է մի ծուխ ճանաչվում և մի մալական ընտանիք էլ է մի ծուխ ճանաչվում, որը բաղկացած է 2—3—4 հոգուց և միաքանակ հող է տրվում այդպիսի զանազան քանակութիւնից բաղկացած ծխերին, որովհետև, այդ երկու ծխերին էլ մի և նոյն հարկն է առնվում։

Բայց չը նայելով և այդ հանգամանքին, կարելի է ասել, որ արքունական գիւղացու հողաբաժինը էլի մեծ է քան կալուածատիրոջ գիւղացունը, որովհետև այս վերջինները ինչքան էլ որ բազմանան, ինչքան էլ որ կրեն հողի պակասութիւն, էլի չեն կարող նոր հող ստանալ կալվածատէրից, բայց արքունական գիւղացին այդպիսի դէպքերում կարող է դիմել նահանգապետին, որը ըստ կարողութեան տալիս է նորանց բաւականութիւն։ Խօսելով հողաբաժինների պակասութեան վրա, մենք պէտք է ասենք, որ այդ երեւոյթը շատ վտանգներ է պատճառում։

Գիւղացին լինելով արտեսով հողագործ, և կրելով հողի պակասութիւն դիմում է կալուածատէրին, որը օգուտ քաղելով այդ հանգամանքից՝ տալիս է իր հողը վարելու ամենածանր պայմաններով։ Մեր սասին տպագրվող կարող է լինել իրողութիւնը։ Շատ տեղերում կարելի է նկատել, որ գիւղացին վարում է հողը կիսով, այսինքն սեփական աշխատանքով, սեփական ծախսով նա վարում է հողը և արդիւնքի կէսը տալիս է հողատէրին։ Այդ պայմանը գիւղացու համար ծանր է, նախ՝ որ նա իր աշխատանքին տէր չէ, երկրորդը, որ հողատիրոջից կախումն ունի և կարելի է ասել թէ նրա սորուկն է։ Հողատէրը չը տալով գիւղացուն իր հողը վարելու, կարող է գցել նրան ամենայուսահատ դրութեան մէջ։ Բացի դրանից վարել հողը կիսով նայնն է, եթէ մի մարդ վեր է առնում միւսից փող 100—120%։ Գիւղաբնակներ մեզանում դեռ ևս չէ ուսումնասիրված հողաբաժինների պակասութեան և դրանից առաջացած վատ հետեւանքների երեւոյթը։ Ցայտնի չէ թէ գիւղը ինչքան վարելահող ունի, քանի ծխից և հոգուց է բաղկացած, բաւականանո՞ւմ են նոքա ունեցած հողով, թէ ուրիշի հողն են վարում և ինչ պայմաններով։ Ինչ աստիճանի ունեցող են գիւղացիք և այլն։ Ի հարկէ վտանգի առաջը առնելու համար, հարկաւոր է մի կողմից ուսումնասիրել հարցը և միւս կողմից գցել նրան գործնական չրջան և քննել պատճառները, որոնք արդեւք են լինում այդ գործի ընթացքին։

Պատճառներից մէկը, որ չէ թոյլ տալիս գիւղացուն ձեռք բերել հարկաւոր քանակութեամբ հող, մեր կարծիքով այն է, որ հողը ծախվում է մեծ քանակութեամբ որի առնելը վեր է մի գիւղացու այժից, իսկ գիւղացիներից կամ բոլորովին և կամ սասիկ դժուարութեամբ է կազմվում ընկերութիւն, որը խմբովին, միացած այժով առնէ մեծաքանակ հող։

Հողը դժբաղդաբար չէ ծախվում բաժանած մանր մասերի, որովհետև կալուածատէրը կամ չէ ցանկանում գլուխս ցաւացնել և կամ ունենալով մեծ պարք, չէ կարողանում բաժանել հողերը մաս մաս և սպասել մինչև որ գիւղացիները կառնեն այդ բոլոր մասերը։ Կալուածատէրը առաւել յարմար է գտնում վաճառել իրան հողը փողատէրի վրա, թէպէտ պակաս գնով, բայց ստանալով արժէքը միանուագ։

Մեր երկրում բնակվող գերմանացիք իրանց մէջ ունեն կազմած հող առնելու ընկերութիւններ և հէնց այդ է պատճառը, որ նրանք հողի պակասութիւն չեն կրում։ Ցայտի ռուս գրողներից մէկը, Վ. Բորբոնով, մը և նոյն երեւոյթը նկատել է և ռուսական գերմանացիների մէջ։ Մեր գիւղացին չէ կարողանում ընկերութիւն կազմել, որովհետև ընկերութիւն կազմելու գաղափարը և կանոնները չը գիտէ և բացի դրանից արգելքը սաստկանում է մեր հողերի պատկանելութեան, քանակութեան և սահմանների անորոշ լինելու պատճառով, նա մանաւանդ, որ մենք մանր հողերի կրէդիտի համար հիմնարկութիւններ չունենք։ Այս հանգամանքների և երեւոյթների վրա մենք պէտք է առանձին ուշադրութիւն դարձնենք այն պատճառով, որ տարոց տարի Կովկասում դատարկ հողերը պակասում են, հողի գինը բարձրանում է, հողերը ընկնում են փողատէրերի և գումարատէրերի ձեռքը, և այդպիսով դժուարանում է գիւղացու համար հող ձեռք բերելը։ Այժմս մեր գիւղերը դեռ ևս հող ձեռք բերելու կարողութիւն ունեն, որովհետև հողերը այնքան թանգ չեն, և մեր գիւղացին լինելով աշխատասէր, հեշտութեամբ կարող է հողեր ձեռք բերել, դնելով իրան աշխատած կապիտալները հողի մէջ և բարօրեալ դրանով իրան և իր որդոց դրութիւն ու ապագան, իսկ 10—20 տարուց յետոյ կարելի է հանգամանքները փոխվեն, և մեր գիւղացին ընկնի այն դրութեան մէջ, ինչ դրութեան մէջ են Ռուսաստանի գիւղացիք, և այն ժամանակ նա ստիպված կը լինի գաղթելուսմ որոնել իր փրկութիւնը։ Այդպիսով մեր անհոգութիւնից կարող են առաջանալ մեծամեծ վտանգներ, որոնց առաջը մենք կարող ենք առնել ներկայումս իսկ ոչ ապագայում։ Կրա համար, մենք կարծում ենք հարկաւոր է կազմել մեծ առևտրական ընկերութիւն, որը առնի յարմար ժամանակում հողը, բաժանէ մանր մասերի և ծախէ մեր գիւղացիների վրա։ Այդպիսով գիւղացիները դնելով իրանց աշխատած կապիտալները հողի մէջ, փոքր առ փոքր կը լրացնեն հողի պակասութիւնը և կը բարօրեն իրանց դրութիւնը։

Բացի գրանից հարկաւոր է տարածել գիւղացիների մէջ ընկերութեան գաղափարը, որ նրանք այդ միջոցով կարողանան ձեռք բերել հողեր և բացի այդ ամենը, հարկաւոր է կազմել մանր հողային կրէդիտի հիմնարկութիւններ, որոնք տան նրանց միջոց գտել թէ ամենն մի հող, թէ իրանց հողաբաժինները, որովհետև տէրութիւնը, ինչպէս ուրիշ տեղեր, չէ փոխ տալու։ Բագուի, Գանձակի և Երեւանի Նահանգի գիւղացիներին փող, որ նրանք գնեն իրանց հողաբաժինները կալուածատէրերից, իսկ այդ գործը չուտով օրվայ հարց պէտք է դառնայ։

Ս. Բասատրեանց